

Եւ սա զիւրն 'ի կաթողիկոսէն. զի յոյժ ահաւոր եւ անխոնարհելի էր սիրտ
 Լեւոնի առ հակառակսն. այլ եւ Յովհաննուն՝ անտեղիտալի գտաւ առ
 Լեւոն անգամ. եւ այսպէս աննկունք իրերաց հանդիպեալք՝ ոչ այլ ինչ էր
 այնուհետեւ ակն ունել՝ բայց որպէս յընդդիմակաց ամպոց բաղխելոց՝
 որոտմունս եւ ճայթմունս լսել երկուստեք, եւ արհաւիրս կացելոցն 'ի
 ստորեւ. եւ երկաքանչիւր իւրայնովն սեփական իշխանութեամբ 'ի վերայ
 իրերաց խիզախէին: Ոչ պատմին հակառակընդդէմ գործք նոցին. այլ չեն
 թերեւ բանք պատմչին, եթէ «Այնքան մեծացաւ ատելութիւն 'ի մէջ նոցա,
 մինչ զի 'ի բաց մերժեաց զնա թագաւորն, եւ առաջնորդքն եւ իշխանքն
 Կիւիկեցոց». որով եւ յայտ առնէ՝ զի հեռաւորքն անծանօթք կամ անհա-
 ւանք իրացս՝ ոչ կամէին միմիլ 'ի ծանր եւ յանսովոր դէպքս, որ դոյզն ան-
 գամ հանդիպեալ էր յառաջ քան զայն ժամանակ. եւ գահընկէցութիւն Պետ-
 րոսի Գետադարձի 'ի ձեռն Յովհաննու Սմբատայ Բագրատունեաց թագա-
 ւորի՝ տակաւին աշխարհածանօթ էր եւ անհամբոյր յաչս ամենեցուն. այլ
 աստանօր ոչ ոք իշխէր կամաց Լեւոնի կալ հակառակ, նաեւ ոչ ստգտանել
 ոք զնա երեւի. այլ պարզաբար վկայեն պատմիչք՝ փոխանակ Յովհաննու
 միաբանեալ եւ եղեալ կաթողիկոս Հայոց զՏէր Դաւիթ՝ զարքեպիսկոպոսն
 Մսսայ եւ զառաջնորդ Արքակաղնոյն, որ եւ նախագահ դասեալ էր յովստի
 եկեղեցոյն՝ յետ կաթողիկոսին՝ 'ի հանդիսի օծմանն Լեւոնի: Միայն Անա-
 նիա եպիսկոպոս Սեբաստիոյ՝ որոյ յառաջագոյն իսկ ասի ակն ունել կա-
 թողիկոսական աթոռոյ, որպէս եւ Յովհաննէս, (մինչեւ ասել ոմանց եթէ
 սոքա եւ այլք ընկեցիկ արարին գտղայ կաթողիկոսն Գրիգոր, եւ ոչ թէ
 ինքնին քարավէժ եղեւ, թէպէտ եւ չէ հաւանելի ցայսվայր անկղիտանալ
 սոցա), պատեհ համարեալ զհակառակութիւնն՝ արար իւր թիկունս զսուլ-
 տանն Թուրքաց, եւ բաղբաղեալ՝ լինել 'ի զարմէ Գետադարձին, որպէս եւ
 աթոռակալ նորին աթոռոյ, քարոզեաց զինքն կաթողիկոս եւ նստաւ 'ի
 Սեբաստիա: Իսկ Յովհաննէս եւ ոչ միոյ 'ի նոցանէ կացեալ պատկառ, եւ ոչ
 իսկ թագաւորին, «մնաց 'ի Հռոմկլայն պանդխտաբար, ըստ պատմչին, եւ
 ապրեցաւ անդ քաջութեամբ իւրով եւ իմաստութեամբ. եւ եկաց ընդդէմ
 ծածուկ եւ յայտնի հնարից նորա»: Իսկ իւր նախ ծածուկ եւ ապա յայտնեալ
 հնարքն, որով արդարեւ վնասեաց Լեւոնի եւ երկրին, այս եղեն, զի
 գրգռեաց զսուլտանն Իկոնիոնի՝ Խոսրովշահ կամ Քէլխոսրու, եւ յարոյց 'ի
 վերայ Բերդուն ամրոցի, զոր եւ յեղակարծումն պաշարեալ բազմութեամբ
 զօրաց՝ էառ, եւ ըմբռնեաց զտէր նորին *Գրիգոր*՝ որդի ուրումն Լեւոնի, ոչ